ՔԱՀԱՆԱՑԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՑՈՒՆ ԽՈՐ ՎԻՐԱՊԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի մայիսի 30-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի երաշխավորությամբ, Խոր Վիրապի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, Ս. Պատարագի ժամանակ, կատարվեց Սամվել սրկ. Թորոսյանի քահանայական ձեռնադրությունն ու օծումը՝ ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանի և խարտավիլակությամբ Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Տրդատ աբեղա Մարտիրոսյանի:

Նախորդ օրը, մայիսի 29-ին, Մայր Տաճարում, հավարտ երեկոյան ժամերգության, տեղի ունեցավ «Կոչումն ընծայութեան» կարգը: Արարողության ընթացքում խարտավիլակ Հայր Սուրբը վկայեց նորընծայի հոգևոր և իմացական կարողությունների ու արժանիքների մասին՝ հայցելով առաջնորդ Սրբազան Հոր հավանությունը՝ նրան արժանացնելու քահանայական աստիճանին: Նորընծան, ըստ կարգի, խոստացավ «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն ու հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա», ապա «ամենայն պատրաստութեամբ և առանց ծանծրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ» և պահել «զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդ սուրբ հայրապետսն ըստ երից սուրբ ժողովոց»:

Արարողության ավարտին նորընծան, ձեռնադրող եպիսկոպոսի հրամանով և ներկայությամբ եկեղեցում գտնվող հավատացյալների, բարձրաձայն կարդաց Ս. Գրիգոր Տաթևացու «Հավատամք»-ը, որը դարձավ կոչում ստացող սարկավագի հավատքի խոստովանությունը:

Կիրակի օրը, մայիսի 30-ին, Խոր Վիրապի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մատուցվեց Ս. Պարատագ: Օրվա պատարագիչն էր ձեռնադրող Սրբազան Հայրը՝ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանը: Ձեռնադրության և օծման արարողությունն սկսվեց «Զի ողորմած և մարդասէրդ ես, Աստուած» աղոթքից հետո: Նորընծան ծնրադիր հրավիրվեց Ս. Խորան՝ խարտավիլակի կողմից պատշաճ սաղմոսների արտասանությամբ, որտեղ նա, շրջվելով դեպի ժողովուրդը, վեր բարձրացրեց ձեռքերը՝ ի նշան Ուխտի և նվիրումի:

«Աստուածային և երկնաւոր շնորհ» շարականից հետո, Սրբազան Հայրը, դնելով «գաջն ի վերայ գլխոյն նուիրելոյն», շնորհեց քահանայական աստիճան: «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության ընթացքում փակվեց խորանի վարագույրը, և նորընծան զգեստավորվեց պատարագչի հանդերձանքով:

Ս. Պատարագը շարունակվեց մինչև «Ողջոյն տուք միմեանց» քարոզը: Ապա սկսվեց օծման խորհրդավոր արարողությունը «Առաքելոյ աղաւնոյ» շարականով, և Սրբազան Հայրը Սրբալույս Մյուռոնով օծեց նորընծայի ճակատն ու ձեռքերը՝ Սամվել սարկավագ Թորոսյանին վերանվանելով Տ. Սամուել քահանա:

Ս. Պատարագի ավարտին Գևորգ Սրբազանը ոգեշունչ քարոզ խոսեց, որի

ընթացքում նշեց, որ նորաօծ Տեր Սամուել քահանան, Մայր Աթոռում քառասունքն անցկացնելից հետո, կվերադառնա՝ ծառայելու Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի Արագովա և Խորենիա գյուղերում:

Քարոզի վերջում Սրբազան Հայրն իր մասնակի շնորհավորական խոսքն ուղղեց Խոր Վիրապ վանքի վանահայր Տ. Մխիթար ավագ քահանային՝ անմնացորդ աջակցության, և Գևորգյան ճեմարանի Զ լսարանի մի քանի սարկավագների՝ արարողության ընթացքում գործուն մասնակցություն ցուցաբերելու համար:

Ձեռնադրությանը ներկա էին հոգևորականներ և մեծաթիվ հավատացյալներ, ովքեր խորին հարգանքով մոտեցան Տեր Հորը՝ շնորհավորելու և նորաօծ աջը համբուրելու:

ՍԱՀԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՐ ՍԱՄՈՒԵԼ ՔԱՀԱՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ
(Ավազանի անունը՝ Սամվել)

Ծնվել է 1974 թ. մարտի 8-ին Վրաստանի Ախալցխա քաղաքում:

1980-91 թթ. սովորել է տեղի Հովհ. Թումանյանի անվան հայկական թիվ 3 միջնակարգ դպրոցում:

1991-93 թթ. ծառայել է Ախալցխայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան, ուր ուսանելով չորս տարի, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ ու երաշխավորությամբ և ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանի, ձեռնադրվել է քահանա: